ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«04» հուլիս 2025թ. ՆՄՈ/638-Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N393 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ՇԵՆԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ,«ԱՐԵՎԱԴԱՇՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 5.4-րդ և 6-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի հունիսի 17-ի ՆՄՈ/603-Ա և 2025թվականի հուլիսի 3-ի N ՄՈ/634-Ա որոշումները.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2017 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների կանոնադրությունները հաստատելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 393 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1. որոշմամբ հաստատված N 40 հավելվածի «Շենավանի միջնակարգ դպրոց» և N99 հավելվածի «Արևադաշտի միջնակարգ դպրոց» պետական ոչ

առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1-2 հավելվածի:

2. Հաստատել «Շենավանի միջնակարգ դպրոց» և «Արևադաշտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների փոփոխությունը՝ համաձայն NN 1-2 հավելվածի:

3. սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2025-07-04 14:30:28 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2025 թվականի հուլիսի 4-ի ՆՄՈ/638-Ա որոշման

«Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2017 թվականի հոկտեմբերի 18-ի N393 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ
1. «Շենավանի միջնակարգ դպրոց»
2. «Արևադաշտի միջնակարգ դպրոց»

04.07.2025

VERIFIED OCSP 04.07.2025 13:01:16 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ